Մամուլի հաղորդագրություն
Դեկտեմբերի 15, 2023

Լոռեցի երեխաներն արդիականացնում են հայկականը արվեստի միջոցով

ԼՈՌԻ — «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը դեկտեմբերի 22-ին «Անգար»-ում կամփոփի «Վահէ և Լյուսի» հիմնադրամի աջակցությամբ անցկացվող «Հայկականի արդիականացում» համատեղ մրցույթը, որը մինչ այս իրականացված արվեստի աշխատարանների տրամաբանական շարունակությունն է:

Նպատակ ունենալով մեծացնել արվեստի հանդեպ հետաքրքրությունը լոռեցի երիտասարդների շրջանում, ինչպես նաև էականորեն զարգացնել ոլորտը Լոռու մարզում՝ երկու հիմնադրամների նախաձեռնությամբ ամիսներ առաջ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնում կազմակերպվեց արվեստի 7 աշխատարան: Փորձի փոխանակմանը միտված հանդիպումները, որ ընդգրկում էին թատերարվեստ, թվային նկարչություն, պար, երաժշտական գործիքներ, վոկալ, ձայնային ձևավորում և նկարչություն ուղղությունները, նախադեպը չունեցող արդյունք գրանցեցին: Դրանցում ներգրավված էին ոլորտի լավագույն ներկայացուցիչներ ինչպես Հայաստանից, այնպես էլ երկրի սահմաններից դուրս՝ Սերժ Ավետիքյան, Հենրի Հովհաննիսյան, Արինա Արարատյան, Միքայել Ոսկանյան, Գոռ Սուջյան, Էդուարդ Պեշտմալջյան, Գևորգ Մուրադ: Նրանց ջանքերի և պատրաստակամության շնորհիվ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ուսանողները հնարավորություն ունեցան կարճ ժամկետում զարգացնել արվեստի նախընտրելի ճյուղի համար անհրաժեշտ հմտությունները: Աշխատարանների մասնակիցները կենտրոնի այն սաներն էին, ովքեր հանդիսանում են նշված ուղղություններով ծրագրերի շրջանավարտներ և գերազանցել էին լավագույն արդյունքներ իրենց ուսումնառության ընթացքում:

Որպես այս նախաձեռնության շարունակություն՝ ՔՈԱՖ-ը, «Վահէ և Լյուսի» հիմնադրամի աջակցությամբ, շուտով հայտարարեց «Հայկականի արդիականացում» թեմայով արվեստի մրցույթ Լոռու մարզի 11-18 տարեկան բոլոր երեխաների համար: «Երբ *5* տարի առաջ բացվում էր ՍՄԱՐԹ կենտրոնը, «ՍՄԱՐԹ Քաղաքացիություն» կրթակարգում արվեստի ծրագրեր ունենալու համար ոգեշնչման աղբյուր դարձավ Սանահինի միջնադարյան համալսարանը, որտեղ դեռ *11*-րդ դարի առաջին կեսին սկսեցին դասավանդվել Յոթ ազատ արվեստները: Այսօր՝ *10* դար անց՝ *21*-րդ դարի առաջին կեսին, «Վահէ և Լյուսի» հիմնադրամի աջակցությամբ Հայաստանի Մանուկներ հիմնադրամը վերականգնում է

Լոռու միջնադարի՝ արվեստների դասավանդման խրախուսման ավանդույթն ու զարկ տալիս հայկական մշակույթի արդիականացմանը: Մրցույթի մասնակցության համար մենք ստացել ենք *231* հայտադիմում և ունենք *52* մրցանակակիր Լոռու մարզի *20*-ից ավելի բնակավայրերից: Մրցանակակիրները կստանան դրամական պարգևներ, իսկ աշխատարանների և մրցույթի հեռահար նպատակն արվեստի ոլորտներում մասնագիտական կողմնորոշման համար իրազեկման ու հետաքրքրության ապահովումն է», - նշում է ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ծրագրերի ղեկավար Ծահանե Հալաջյանը:

Ոլորտային ժյուրիի գնահատման արդյունքների հիման վրա մրցանակաբաշխության օրը կհայտարարվեն երկու տարիքային խմբի 7 ուղղության՝ 1-ին, 2-րդ, 3-րդ հորիզոնականների մրցանակակիրների և խրախուսական մրցանակի արժանացած դիմորդների անունները:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղական բնակչության կյանքի որակը՝ կենտրոնանալով մասնավորապես երեխաներին և երիտասարդներին վերաբերող ծրագրերի և կարիքների վրա: ՔՈԱՖ-ի զարգացման թիրախային ոլորտներն են կրթությունը, առողջապահությունը, ինչպես նաև սոցիալական և տնտեսական զարգացումը: ՔՈԱՖ-ը մեկնարկել է իր ծրագրերը *2004*թ.-ին՝ սկսելով մեկ գյուղից և ընդլայնվելով Հայաստանում ու Արցախում՝ ավելի քան *82* համայնքներում՝ ներդնելով ավելի քան *70* մլն ԱՄՆ դոլար՝ *100,000*-ից ավել գյուղաբնակ շահառուների համար:

«Վահէ և Լյուսի» հիմնադրամի մասին

«Վահէ և Լյուսի» մրցանակը նվիրված է Վահէ Ֆատտալի և նրա կնոջ՝ Լյուսիի հիշատակին: Իր կյանքի վերջին տարիներին Վահէն հիմնել է այս մրցանակը՝ ի հիշատակ իր կնոջ: Նկարիչ և գրաֆիկական դիզայներ Վահէ Ֆատտալը ուսումնասիրել է գեղանկարչություն Փարիզի գեղարվեստի ազգային դպրոցում: Լոս Անջելեսի մի շարք մեծ կազմակերպություններում որպես արտ-տնօրեն աշխատելուց հետո, հիմնել է դիզայնի և գովազդի սեփական գրասենյակը: Լյուսին եղել է Կալիֆոռնիայի համալսարանի շրջանավարտ, ունեցել է փիլիսոփայության և ֆրանսիական գրականության մագիստրոսական աստիճան: Այնուհետև Փարիզի Սորբոնի համալսարանում ավարտել է ֆրանսերենի և քաղաքակրթական գիտությունների դասընթացներ: Վահէն և Լյուսին հանդիպել, ամուսնացել և ապրել են Փարիզում: Հետագայում նրանք տեղափոխվել են Լոս Անջելես, որտեղ Լյուսին որոշ տարիներ ֆրանսերեն դասավանդելուց հետո հիմնել է իր զբոսաշրջային գործակալությունը Բևերլի Հիլզում, որը տրամադրում էր միջազգային *VIP* ուղևորություններ և բնակության ծառայություններ արվեստի *(*ցուցասրահներին, արտիստներին, աճուրդի տներին, արվեստի խորհրդատուներին*)*, ժամանցի ոլորտի *(*կինոարտադրողների, դերասանների, ռեժիսորների, պրոդյուսերների*)* ներկայացուցիչների, ինչպես նաև կորպորատիվ կազմակերպությունների: Վահէն ու Լյուսին կիսում էին նվիրվածությունն ու սերը Հայաստանի, կրթության, արվեստի և աշխարհի բացահայտման հանդեպ:

ՄԵԴԻԱ ԿՈՆՏԱԿՏ

Նանա Մարդոյան
ՔՈԱՖ-ի հաղորդակցության բաժնի ղեկավար
Էլ. հասցե՝ nana.mardoyan@coaf.org
Բջջ.՝ +374 55 003 723